Արձանագրություն N 2
«Գյումրու Մոր և Մանկան Ավստրիական Հիվանդանոց» ՓԲԸ-ի ծննդատան նոր մասնաշենքի ներքին հարդարման և ինժեներական աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԳՀԽԾՁԲ-2024/48» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Արսեն Բաբայան
Հանձնաժողովի անդամներ Վահան Վահանյան, Հայկ Խուրշուդյան,
Հանձնաժողովի քարտուղար Արմինե Գալուստյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Բաբայան)

Ընդունել ի գիտություն, որ 03.09.2024թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2024 թվականի սեպտեմբերի 10-ին, ժամը 15:00-ն:

2024 թվականի սեպտեմբերի 10-ին ժամը 15:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության հասցե, հեռախոս, էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«ԱԳԷԱ» ՍՊԸ	Շիրակի մ, գ. Ախուրյան, 077 73 37 88, agea.llc@mail.ru	05536861

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Բաբայան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի կազմման և ներկայացման, փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին,

---

(Ա. Բաբայան)

«ԱԳԷԱ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում առկա են բոլոր փաստաթղթերը և համապատասխանում են հրավերի պահանջներին:

2022թ դեկտեմբերի 16-ի «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-431-Ն օրենքի համաձայն մինչև 2024 թվականի սեպտեմբերի 17-ը քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող լիցենզավորված սուբյեկտները urban.e-gov.am հարթակի միջոցով պետք է դիմեն վերալիցենզավորման՝ ստանալու համապատասխան լիցենզիան: Մասնակցի կողմից հայտով կցվել է մինչև նշված օրենքի ուժի մեջ մտնելը տրամադրված լիցենզիան և ներդիրները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

09.10.2024թ.

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 41-րդ կետով՝ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել մասնակիցներին՝ շտկելու արձանագրված անհամապատասխանությունը, մասնավորապես՝ ներկայացնել նոր կարգով տրամադրված լիցենզիան և ներդիրները կամ հավաստում այն մասին, որ մինչև 17.09.2024թ ընկերությունը դիմել

է լիցենզավորման և մինչև պայմանագրի կնքումը կներկայացնի պահանջվող լիցենզիաները, ըստ համապատասխան դասերի:

4. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Ա. Բաբայան)

Ստորև ներկայացվում են մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները

Հ/հ	գնման առարկայի անվանումը	գնման գինը	մասնակիցների անվանումը	մասնակիցների գնային առաջարկները		
				առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր
1	Գյումրու «Մոր և մանկան ավստրիական հիվանդանոց»-ի ծննդատան նոր մասնաշենքի ներքին հարդարման և ինժեներական աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	5 650 000	«ԱԳԷԱ» ՍՊԸ	4 400 000	0	4 400 000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Ընտրված մասնակիցներ որոշելու մասին

(Ա. Բաբայան)

18.10.2024թ.

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ «ԱԳԷԱ» ՍՊԸ-ն 1-ին չափաաժնով ճանաչել ընտրված.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Բաբայան)

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԳՀԽԾՁԲ-2024/48» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ չի սահմանվում:

Պայմանագիր կնքելու ծանուցում ուղարկել «ԱԳԷԱ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնով՝ 4 400 000 ՀՀ դրամ պայմանագրային գնով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ *Ա. Բաբայան*

անդամներ՝ _____ *Վ. Վահանյան*

_____ *Հ. Խուրշուդյան*

քարտուղար՝ _____ *Ա. Գալուստյան*